

Լյուդվիգ Գ. Վարդանյան
Փիլիսոփ. գիտ. թեկնածու

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՐԳ

Որոշ նկատառումներ քաղաքականությունն ուսումնասիրող
գիտության վերաբերյալ*

**Սոցիալական գիտությունների հիմնարար տար-
բերությունները ոչ թե նրանց ուսումնասիրության
առարկայի, այլ ավելի շուտ՝ կիրառվող նախադր-
յալների, օգտագործվող մեթոդների և ստացվող
եզրակացությունների մեջ են¹:**

Մանկուր Օլսոն

Մուտք

Այսօր ոչ ոք չի կարող հերքել այն իրողությունը, որ քաղաքական երևույթները
պետք է հետազոտվեն գիտականության որոշակի չափորոշիչների միջոցով, և իր
եզրակացություններում հետազոտողը պետք է լինի օբյեկտիվ ու անկողմնակալ:

Բայց, դրանով հանդերձ, քաղաքականության ուսումնասիրության համար
ենթադրելի են ևս երկու կարևոր խնդիրներ: Նախ, կարո՞ղ է արդյոք քաղաքագի-
տական ուսումնասիրությունն ունենալ գիտական բնույթ՝ **համապատասխանել
ճանաչողության տեսության դասական չափորոշիչներին**, և երկրորդ, ինչպիսի՞ն
պետք է լինի քաղաքականությունն ուսումնասիրող գիտությունը, այսինքն՝ քաղա-
քական գիտությունը որպես դիսցիպլին² կամ գիտակարգ:

*Յողվածն ընդունվել է տպագրության 27.08.2012:

¹ Տե՛ս **Olson M.** 1991. Economics, Sociology, and the Best of All Possible Worlds. – **Abell P.** (ed.) Rational Choice Theory. Aldershot, England.

² **Դիսցիպլին** (լատ. disciplina-ուսմունք, գիտակարգ): 1.Գիտական իմացության ինքնուրույն բնագավառ (այս իմաստով՝ դիսցիպլինը և գիտությունը հոմանիշներ են): 2.Ուսումնական առարկա, դասընթաց: 3.Մարդկանց վարքի որոշակի կարգ, որը համապատասխանում է հասարակությունում ձևավորված իրավունքի և բարոյականության նորմերին, ենթարկվում կոլեկտիվի գործունեության պահանջներին և կարգ ու կանոնին: 4. Խիստ կարգապահության սովորույթ, զսպվածություն, համառորեն աշխատելու

Գ (Ժ) քաղաք, թիվ 3 (39) հուլիս-սեպտեմբեր, 2012

վե՛ր համահայկական հանդես

Գաղտնիք չէ, որ քաղաքագիտությունը մնան չէ ո՛չ բնական և ո՛չ էլ ճշգրիտ գիտություններին: Քաղաքական երևույթների ճշգրիտ նկարագրումն ու բացահայտումն, ըստ էության, անհասանելի է, և քաղաքագետները միշտ ստիպված են որոնել ու գտնել դրանց առավել համապատասխանող նկարագրություններ և բացատրություններ: Որպեսզի քաղաքական որևէ երևույթ կամ հարցադրում իր նկարագրման ու բացատրության առումով համոզիչ լինի, քաղաքագետը պետք է ավելի մեծ ջանք ու եռանդ ներդնի, քան ճշգրիտ գիտությունների բնագավառում ներկայացվող նկարագրությունների և բացատրությունների դեպքում: Քանզի, ինչպես նշում է ամերիկյան հայտնի քաղաքագետ Ջոն Իոաննիդիսը, քաղաքագիտական որևէ հետազոտության հիմքում քաղաքական երևույթի վերաբերյալ հավաստի վկայության ստացման հնարավորության մասին որոշակի ենթադրությունն է³:

1. Քաղաքագիտության անցած ուղին

Տարբեր ժամանակներում քաղաքականությանը, որպես երևույթի, վերաբերվել են տարբեր կերպ. հանդես են եկել տարբեր դպրոցներ, առկա են դրանց յուրահատկությունների վերաբերյալ բազմազան տեսակետներ, որոնք առանձնանում են թե՛ իրենց բովանդակությամբ և՛ թե՛ ընդգրկման շրջանակներով: Քաղաքագիտական դպրոցները որպես երևույթ ծագել են վաղ անցյալում և, անկասկած, հանդես կգան ապագայում: Բավականին բարդ է մաս դրանք որպես պատմական հաջորդականություն ներկայացնելը:

Անտիկ մտածողների կամ մոր ժամանակների փիլիսոփաների առաջադրած գաղափարները շարունակում են «լրացնել» մեր ժամանակակիցների աշխատանքները: Մյուս կողմից, այս կամ այն դպրոցի հանրաճանաչության կորուստը չի նշանակում մախկինում առաջարկված հայեցակարգերի ժխտում և հրաժարում՝ գիտական որոնման մշակված միջոցներից⁴: Լինելով մտավոր գործունեության հնագույն բնագավառներից մեկը՝ քաղաքականության մասին գիտությունը սկզբում կազմում էր փիլիսոփայության մի մասը՝ նպատակ ունենալով ապահովել մարդկային հասարակության կառուցման առավել ընդհանուր սկզբունքները:

Ընդունված է ասել, որ քաղաքական միտքը սկզբնավորվել է անտիկ ժամանակներում, հատկապես Հին Հունաստանում: Հենց այստեղ առաջացավ այն, ինչը մենք այսօր անվանում ենք քաղաքական փիլիսոփայություն: Դա փիլիսոփայություն էր, որին ամենից առաջ հետաքրքրում էր ոչ թե «գոյը», այլ «գնահատումը», ոչ թե այն, «ինչ առկա է», այլ այն, թե «ինչ պետք է անել»: Եվ այս իմաստով էլ քաղաքական փիլիսոփայությունն առավելապես կրում էր սոցիալ-էթիկական, պատվիրողական կամ ինչպես մենք ենք այսօր ասում՝ **նորմատիվ** բնույթ: Այդ փիլիսոփայության հիմնադիրներ են համարվում Պլատոնը և Արիստոտելը:

կարողություն: «Դիսցիպլին» հասկացության վերաբերյալ ներկայացված տեսակետները և դրանց բաղկացուցիչներն այս կամ այն չափով հարաբերություն ունեն ակադեմիական դիսցիպլինի հանդեպ և՛ տվյալ բնագավառի հետազոտողների նկատմամբ իրականացվող վերահսկողության գործառնություն, և՛ անհրաժեշտ հնարքների որոշակի հավաքակազմով, առանց որոնց անհնար է կատարելապես տիրապետել գիտության հմտություններին:

3 St'u Ioannidis J. Why Most Published Research Findings ar False. – PloS Medicine. 2005. vol. 2, N 8.

4 St'u Contemporary Political Analysis / J. C. Charlersworth (ed). N.Y., 1977. p. 5.

Միջին դարերում նորմատիվ փիլիսոփայության գաղափարներն իրենց երկե-
րում զարգացրին այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Օգոստոս (Ավգուստինոս)
Երանելին (354-430), Թովմա Աբվիհնացին (1225-1274) և այլք: Այսպես ձևավոր-
վեց քաղաքականության հանդեպ «ավանդական» վերաբերմունքը, որի հիմնա-
կան մեթոդը գրական աղբյուրների քննադատական վերլուծությունն էր, իսկ
խնդիրը՝ այս կամ այն մտածողի գաղափարները պարզաբանելը, նրանց հայացք-
ների զարգացմանը հետևելը և այլն: Անշուշտ, գիտական տեսանկյունից այն օբ-
յեկտիվ բնույթ չուներ, քանի որ գործ ուներ քաղաքական գիտության զուտ նորմա-
տիվային հարցադրումների հետ. օրինակ՝ «Ինչու՞ ես պետք է ենթարկվեմ
պետությանը», կամ՝ «Ինչպե՞ս պետք է բաշխվեն բարիքները», «Ինչպիսի՞ն են
անձնական ազատության սահմանները» և այլն:

Ինչպես ընդունված է ներկայացնել՝ միայն 19-րդ դարի վերջից սկսած այս
խիստ փիլիսոփայական մոտեցումն աստիճանաբար սկսեց վերափոխվել ինք-
նուրույն գիտական դիսցիպլինի՝ քաղաքական գիտության⁵: Սակայն հասարա-
կական կյանքում եղած փոփոխություններին զուգընթաց և գիտակարգերի
(գիտական դիսցիպլինների) զարգացման միտումներին համապատասխան, քա-
ղաքական գիտելիքի բնագավառին հաճախ ներկայացվել է առավել նեղ իմաս-
տով գիտություն դառնալու առաջադրանքը, ինչը պահանջում էր օգտագործել
ավելի ճշգրիտ և իր դրսևորմամբ առավել խիստ ու բնական գիտություններին հա-
րիր մեթոդաբանություն: 19-րդ դարում այս խնդիրն առաջադրել են փիլիսոփա-
յության պոզիտիվիստական ուղղությունը և մարքսիզմը:

Ժամանակի ընթացքում առարկայացած էմպիրիկ կամ ինչպես այն անվա-
նում են՝ **դեսկրիպտիվային** ավանդույթը նույնպես սկզբնավորվել է անտիկ ժամա-
նակներում: Դրա տարբերը տեսանելի են Արիստոտելի ներկայացրած պետա-
կան կառուցվածքի տիպաբանության փորձերում, իտալացի մտածող Նիկոլո
Մաքիավելիի՝ պետական կառավարման իրողությունների մանրամասնումնե-
րում, ֆրանսիացի մտածող Շառլ Մոնտեսքիոյի կառավարման և իրավունքի սո-
ցիոլոգիական տեսությունում և այլուր: Փաստորեն, այս դեպքում ուշադրության
կենտրոնում էին քաղաքական ինստիտուտները և դրանց գործունեությունը:
Պետք է նշել, որ, օրինակ, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում այս տեսակետը դար-
ձավ քաղաքագիտության գերակայող ուղղությունը: Նրան բնորոշ են քաղաքա-
կան իրականությունն օբյեկտիվորեն նկարագրելու փորձերը: Նման տեսակետը
դեսկրիպտիվային է այն իմաստով, որ ի տարբերություն նորմատիվային տեսա-
կետի, որը մշակում է համապատասխան դատողություններ և առաջարկներ, վեր-
ջինս ձգտում է վերլուծել և բացատրել:

Այս վերափոխման ընթացքն իր գագաթնակետին հասավ 20-րդ դարի 50-60-
ական թվականներին, երբ սկսվեց քաղաքական մտքի դասական ժառանգության
ընկալումը՝ որպես անիմաստ մետաֆիզիկա (բնագանցություն, մտահայեցողա-
կանություն): Պոզիտիվիզմի առաջադրած մման պահանջմունքը դարձավ «բի-

5 Ընդհանուր առմամբ, քաղաքականությունը կարելի է սահմանել որպես հասարակական
հարաբերությունների ոլորտ, որը սերտորեն առնչված է քաղաքական իշխանությանն ու պետական
կառավարմանը: Հետևաբար, ինչպես որևէ այլ գիտության, այնպես էլ քաղաքական գիտության
խնդիրն է տվյալ ոլորտի հարաբերությունները և դրանցում դրսևորվող օրենքների ձևավորումներն ու
կազմավորումները ճանաչել իրենց էմպիրիկ ու տեսական կողմերով:

հեյվիորիստական հեղափոխության»⁶ գլխավոր կարգախոսը, որն ընդգրկեց 20-րդ դարի 20-70-ական թվականների քաղաքական վերլուծությունները⁷: Իհարկե, այդպիսի գաղափարը գրավիչ էր: Դրանով հնարավոր էր անմիջապես ստանալ այն ճշգրիտ միջոցները, որոնք կտարբերեին ճշմարիտը կեղծից, փաստերը (էմպիրիկ տվյալները) արժեքներից (նորմատիվ կամ բարոյական պատկերացումներից), օբյեկտիվը սուբյեկտիվից, գիտելիքը կարծիքից, ուստիև քաղաքականության աշխարհը հանրության համար կլիներ պարզ: Տեղին է նշել, որ բիհեյվիորիզմը քաղաքագետների մի ամբողջ սերունդ հեռացրեց նորմատիվ քաղաքական մտքի ավանդույթներից: «Ազատություն», «հավասարություն», «եղբայրություն», «մարդու իրավունքներ» հայեցակարգերը դիտարկվում էին որպես անիմաստ հարցադրումներ, քանի որ դրանք էմպիրիկ ստուգման ենթակա չէին:

Սակայն այս տեսակետները 20-րդ դարի 70-ական թվականներից ենթարկվեցին որոշակի փոփոխությունների, քաղաքականության գիտական ուսումնասիրության հնարավորությունների շուրջ խանդավառությունը սկսեց աստիճանաբար թուլանալ, նվազել, և նորից ընդունվեց հիմնական քաղաքական սկզբունքների ու նորմատիվ հայեցակարգերի՝ որպես անանց արժեքների ըմբռնումը⁸, որն արտացոլված էր այդ շրջանի ճանաչված տեսաբաններ Ջոն Ռոուլսի (John Rawls) «Արդարության տեսություն» (1971), Ռոբերտ Նոզիկի (Robert Nozick)

6 **Բիհեյվիորիզմ** (անգլ. behaviour - վարք, վարքագիծ, behaviourism - վարքաբանություն, behaviourism - վարքականություն) - գիտություն վարքի, վարքագծի վերաբերյալ, հոգեբանական գիտության առաջատար ուղղություններից մեկը, որը դարձավ քաղաքական հոգեբանության գլխավոր մեթոդաբանական հիմքը: Բիհեյվիորիզմը (վարքաբանությունը) ծագել է 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, հիմնադիրներն են ամերիկյան հոգեբաններ Էդուարդ Լի Թորնդիկը (Edward Lee Thorndike) և Ջոն Բրոուդս Ուոտսոնը (John Broadus Watson): «Բիհեյվիորիզմ» հասկացությունը և բիհեյվիորիզմի ծրագիրն առաջին անգամ առաջադրել է Ջ. Ուոտսոնը (1913): Որպես հոգեբանական ուղղություն, վաղ բիհեյվիորիզմն ընդգծում էր, որ հոգեբանությունը պետք է ուսումնասիրի վարքը և ոչ թե գիտակցությունը, ինչը սկզբունքորեն անքննելի է: Բիհեյվիորիզմն առանց անդրադառնալու գիտակցությանը, ժխտում էր գիտակցությունը որպես գիտական հետազոտության առարկա և հոգեկանը հանգեցնում էր վարքի տարբեր ձևերի, միաժամանակ՝ վարքը հասկանալով որպես արտաքին միջավայրի ազդակների նկատմամբ օրգանիզմի արձագանքների, հակազդեցությունների (ռեակցիաների) ամբողջություն («ստիմուլ-ռեակցիա» S-R): Սակայն 20-րդ դարի սկզբներին պարզ դարձավ տիրապետող «ինքնադիտողական հոգեբանության» անկարողությունը հատկապես մտածողության և դրանց շարժառիթների հիմնահարցերի վերլուծությունների ժամանակ: Փորձնականապես ապացուցվեց, որ կան մարդու չգիտակցված, ինքնադիտողականությանը անհասանելի հոգեբանական գործընթացներ: Հոգեբանական վարքաբանության հիմքում այն համոզումներն է, թե միտքն անհնար է հետազոտել, և գիտակցությունն իբր՝ անհասանելի է օբյեկտիվ ուսումնասիրությանը, ուստիև ժխտում է նրա դերը որպես մարդկային գործունեության իրական կարգավորիչի: Ուսումնասիրման միակ իսկական առարկան մարդու և կենդանիների արձագանքը (ռեակցիան) է արտաքին ազդակներին: Իհարկե, տարիներ անց, լուրջ քննադատության ազդեցությամբ, բիհեյվիորիզմը սկսեց մեղմացնել իր վաղ ձևակերպումները մարդու վարքում ընդունելով նաև գիտակցության դերը:

Ըստ բիհեյվիորիզմի՝ սոցիոլոգիական տեսությունները պետք է բացառիկորեն կառուցվեն վարքի ուսումնասիրության վրա, որոնք տրվում են դիտարկման և քանակական չափումների միջոցով: Բիհեյվիորիստական տեսակետը քաղաքական երևույթները քննարկում է կոնկրետ անհատների վարքի միջոցով: Անցնելով բարդ ճանապարհ, բիհեյվիորիզմը քաղաքականության ուսումնասիրության առումով վերափոխվեց և դարձավ քաղաքական գործընթացների վերլուծության հիմնական մեթոդներից մեկը, ստացավ վարքաբանական (հաճախ ուղղակի անվանում են բիհեյվիորիստական) անվանումը: Այս առումով բիհեյվիորիզմի իմաստը հասկանալի է հենց անվանումից, որը քաղաքականությունը համարում է մարդկանց վարքի (գործունեության) յուրահատուկ ոլորտ:

7 Տե՛ս **Борншолец К. П.** Методы политических исследований: Учеб. пособие для студентов вузов / К. П. Борншолец. — 2-е изд., испр. и доп. — М.: Аспект Пресс, 2010, с. 8.

8 Տե՛ս **Smith B., Johnson K., Paulsen D., Shocket F.** Political Research: Methods, Foundations and Techniques. Atlanta, 1976. p. 3. Մեջբերումը ըստ **Дегтярев А. А.** Методы политологических исследований // Вестник моск. ун-та. Серия 12. Политические науки. 1996, N 6.

«Անարխիա, պետություն և ուտոպիա» (1974) և այլոց աշխատություններում⁹:

Արդյունքում՝ այսօր քաղաքականության վերաբերյալ վերլուծություններում գերակայում է տեսական և էմպիրիկ¹⁰ մոտեցումների համադրությունը: Եվ իբրև հետևանք՝ ունենք մի գիտություն, որը, կարելի է ասել, առավել արգասավոր և առավել հետաքրքիր է, քանի որ ընդգրկում է տեսական բազմաթիվ ընթացումներ և վերլուծության դպրոցներ: Նոր կոնցեպտուալ¹¹ չափումները քաղաքական գիտությանն օժտեցին, մասնավորապես, քաղաքական գործընթացների ուսումնասիրման նկատմամբ միջդիսցիպլինար և համակարգային մեկնողական սկզբունքներով: Հոգեբանության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության, մաթեմատիկայի և կիբեռնետիկայի դրույթների ընդգրկումն էապես ընդլայնեց քաղաքական հետազոտությունների շրջանակները և մեթոդաբանական այն ընթացակարգերի տարրապատկերները, որոնց վրա նրանք հենվում են: Եվ այնուամենայնիվ, քաղաքականության մեկնաբանությունների, ուսումնասիրությունների գիտական բնույթի առնչությամբ ներկայումս նույնպես առկա են լուրջ հարցականներ: Քաղաքական գիտության գիտական բովանդակությունն էապես տարբերվում է բնական գիտակարգերի բովանդակությունից, որոնք շատ դեպքերում մնում են որպես շրջակա աշխարհի վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքի չափորոշիչներ:

Ուստի գիտական քննարկումների տեսանկյունից այսօր առաջադրվում են այնպիսի կարծիքներ ու տեսակետներ, ըստ որոնց՝ քաղաքական տեսությունը (լայն իմաստով՝ քաղաքական գիտությունը) որոշակի ճգնաժամ է ապրում: Այսպես, դեռևս 20-րդ դարի կեսին ամերիկացի ճանաչված քաղաքագետ Դեյվիդ Իստոնը (David Easton) նշում էր, որ ժամանակակից քաղաքագիտական միտքն ինչ-որ կերպ ապրում է հազարամյա վաղեմության գաղափարների հաշվին և, որ առավել ընկճող է, մենք ոչ մի առաջընթաց չենք տեսնում քաղաքական գիտելիքների նոր համադրության (սինթեզի) դրսևորման համար¹²:

2. Քաղաքագիտության մեթոդաբանական հիմնախնդիրները

Հետազոտողները ոչ միայն բաժանվում են այն հարցում, թե որոնք են քաղաքական տեսության առարկան, մեթոդներն ու գործառնությունները, այլև հարցականի տակ են դնում դրանց հնարավոր գոյության կոնկրետ ձևերը: Միակ բանը, որի հետ համաձայնում են քաղաքական գիտության որոշ մասնագետներ, քաղաքական փիլիսոփայության պատմության ուսումնասիրման օգտակարությունն է¹³: Նմանօրինակ կարծիք է հայտնել նաև ճանաչված քաղաքագետ Իեն Շապիրոն. «Ես ենթադրում եմ, որ վերջին կես դարի ընթացքում քաղաքական տեսաբանները

9 Տե՛ս **Розз Дж.** Теория справедливости. Новосибирск: Изд-во Новосибирского ун-та, 1995. **Nozick R.** Anarchy, state and utopia. New York: Basic Books, 1974.

10 **էմպիրիկ** (հուն. empiria փորձ, փորձնականություն) - փորձով պայմանավորված, փորձից բխեցված:

11 **Կոնցեպտ** (լատ. conceptus-միտք, հասկացություն) - հասկացության իմաստային բովանդակություն, որի ծավալը այդ հասկացության առարկան է, ի տարբերություն նրա արտահայտման կոնկրետ-լեզվական ձևի: Կոնցեպտը հասկացությունից տարբերվում է նրանով, որ այն ոչ միայն իմաստային առումով մտքում պատկերացվում, այլև զգացվում է, դառնալով հույզերի և ապրումների, համակրանքի և հակակրանքի, նկարագրի և զուգորդման առարկա, ունի հաղորդակցային բնույթ, այսինքն՝ դրսևորվում է երկխոսություններում և շփումներում:

12 Տե՛ս **Easton D.** The Decline of Modern Political Theory. 1951 // The Journal of Politics 13:1, 36-58, p. 51.

13 Տե՛ս **Strauss L.** What is Political Philosophy? 1957. // The Journal of Politics 19:3, 343-368, p. 346.

դարձել են կատարյալ երագողներ»¹⁴:

Ավանդաբար՝ գիտական դիսցիպլինի ներկայացման ժամանակ անհրաժեշտ են հետևյալ գիտասկզբունքները. 1) սահմանել կամ ներկայացնել օբյեկտն ու առարկան, 2) սահմանել հասկացութային ապարատը, 3) նկարագրել հետազոտական մեթոդները, 4) սահմանագատել կից կամ սահմանային դիսցիպլինների հետ առկա հարաբերությունները, ինչի առնչությամբ էլ ենթադրելի է՝ 5) տվյալ դիսցիպլինի առանձնահատուկ դերի և նշանակության պարզաբանումը:

Ուստի, երբ անցնում ենք քաղաքական գիտությանը կամ քաղաքական տեսությանն առնչվող տեսակետների ու սկզբունքների քննարկումներին, բախվում ենք այն հարցադրմանը, թե ինչն է քաղաքական գործողություն կամ գործունեություն, և ինչն այդպիսին չէ: Մա արդեն լուրջ խնդիր է և պահանջում է քաղաքագիտական դիսկուրս¹⁵:

20-րդ դարի 20-ական թվականների վերջերին գերմանացի ականավոր փիլիսոփա և սոցիոլոգ Կարլ Մանհեյմը (Karl Mannheim) իր «Գաղափարախոսություն և ուտոպիա» աշխատությունում (1929) հետևյալ հարցադրումն էր կատարում. ինչու՞ մինչև այժմ չի եղել քաղաքական գիտություն¹⁶: «Մեր գիտելիքը,- գրում է նա, - տարածվում է գրեթե ամեն ինչի վրա, և գիտելիքի յուրաքանչյուր բնագավառում գոյություն ունեն առկա տվյալների փոխանցման և հաղորդման մեթոդներ: Մի՞թե մարդկային գործունեության հենց այն ոլորտը, որից կախված է մեր ընդհանուր ճակատագիրը, անհասանելի կլինի գիտական հետազոտության համար և նրանից կթաքցնի իր գաղտնիքները: Այս հիմնահարցի խորհրդավորությունն ակամա անհանգստություն է առաջացնում, և շատերը, հավանաբար, իրենք իրենց հարց են տվել. **դա պարզապես նրանո՞վ է պայմանավորված, որ խնդիրը ժամանակից շուտ է դրված, և պատմության տվյալ շրջափուլում դեռևս հնարա-**

14 Shapiro I. Problems, Methods and Theories in the Study of Politics, or what is Wrong with Political Science and what to do about it. 2002. // Political Theory 30:4, 596-619. p. 596. Տես նաև ШAPIPO ИЭН. Моральные основания политики. Учебное пособие / Пер. с англ. Под ред. В.С. Малахова.—М.: КДУ, 2004.— 304 с. — (Политический разум и практика политики / Отв. ред. Б.Г.Капустин), с. 253.

15 **Դիսկուրս** (ֆր. discours - խոսք, ելույթ, ուշ լատ. discursus - փաստարկ, դատողություն): Նպատակաուղղված գրավոր արտահայտություն, տեքստ: Ժամանակակից լեզվաբանության և փիլիսոփայության բարդ և դժվար սահմանման ենթարկվող հասկացություններից մեկը, որը լայնորեն տարածվել է անգլո-գերմանական մշակույթում: Եվրոպական շատ լեզուներում, ինչպես նաև ռուսերենում այս բառին համարժեք բառ չկա: Այն թարգմանվում է որպես դիսկուրս, խոսք, բառ, տեքստ, դատողություն: Առհասարակ դիսկուրսն օգտագործվում է տարբեր իմաստներով. մի դեպքում որպես իշխանության սուբյեկտների հաղորդակցային փոխազդեցության բնութագրումներից մեկը, որը ներկայացնում է հասարակական կարծիքի կազմավորման ներքնապես տարբերացված գործընթացը և հասարակական-քաղաքական կամքի ձևավորումը, մյուս կողմից՝ օգտագործելով Յուրգեն Հաբերմասի տերմինաբանությունը՝ որպես դատողություն վիճաբանելի նորմերի, հարցադրումների, հրապարակային քննարկումների ժամանակ՝ բոլորի հավասար մասնակցության շեշտադրմամբ:

Դիսկուրս հասկացությունը և դիսկուրսային վերլուծությունները լայնորեն տարածվեցին սոցիալական և հումանիտար գիտություններում: Պատմությունը դրանք օգտագործում է անցյալի հանդեպ որոշակի հայեցակարգերի հստակեցման ժամանակ, սոցիոլոգիան և հոգեբանությունը՝ տարբեր տեսակի անկետաների կազմման, հարցազրույցների և քննարկումների ընթացքում, քաղաքագիտությունը՝ ներկայացվող վերլուծությունների, տեքստերի և մեկնաբանությունների առումով: Ֆրանսիացի գեղագետ, քննադատ և փիլիսոփա Ռոլան Բարթը [Barthes R.] գրականագիտության և քննադատության մեջ դիսկուրսի մոտեցման կիրառման սկիզբը դրեց: Ֆրանսիացի ճանաչված փիլիսոփա և մշակութաբան Միշել Պոլ Ֆուկոն [Foucault M.P.] ամբողջ արևմտյան մշակույթի էվոլյուցիան դիտարկում է լեզվի և դիսկուրսի արիզմայով՝ հատուկ ուշադրություն դարձնելով գիտությանը, փիլիսոփայությանը և զրականությանը:

16 Տես Мангейм К. Идеология и утопия. // Мангейм К. Диагноз нашего времени.—М., 1994. с. 93. Դետաքրքրական է, որ այս աշխատության 3-րդ գլուխն ունի «Կարո՞ղ է քաղաքականությունը գիտություն լինել» անվանումը:

վոր չէ պատասխանը գտնել, կամ էլ՝ այստեղ մենք իսկապե՞ս բախվում ենք ճանաչողության սահմանին, որը խախտելն ընդհանրապես անհնար է»¹⁷ (ընդգծումը մերն է - Լ.Վ.):

Ուստի քննարկելով նման ենթադրությունները, Կ.Մանհեյմը մի դեպքում մատնանշում է հասարակական գիտությունների ծագման, հանդես գալու ոչ վաղ անցյալը, մյուս դեպքում, ըստ նրա՝ երկրորդ ենթադրության օգտին վկայում է այն բանի անորոշ զգացումը, թե քաղաքականությունն ինքնին բացարձակապես յուրահատուկ բնագավառ է, որի մաքուր ռացիոնալ ուսումնասիրությունը բախվում է յուրատեսակ դժվարությունների, որոնք բացակայում են գիտելիքի այլ բնագավառներում: Այս դեպքում գիտական հետազոտության բոլոր փորձերը նախօրոք ենթակա են անհաջողության՝ այդ ոլորտի առանձնահատուկ հատկանիշների պատճառով¹⁸:

Հասկանալի է, նշում է Կ.Մանհեյմը, քաղաքականության մեջ կան օբյեկտներ, որոնք լիարժեքորեն ենթակա են ուսումնասիրման և ըմբռնման: Պրոֆեսիոնալ քաղաքական գործիչը պետք է իմանա որոշակի քաղաքական միջավայրի պատմությունը, որտեղ իրականացվում է նրա գործունեությունը (պատմագիտության և այն լրացնող վիճակագրական տվյալների իմացությունը), պետական կառուցվածքը, սոցիալական հարաբերությունները, որոնց հիման վրա գոյություն ունեն պետական հիմնարկությունները, քաղաքական գաղափարները և ավանդույթները, ինչպես նաև զանգվածներին հավաքագրման ենթարկելու «տեխնիկան»: Սակայն բոլոր այդ գիտելիքները վերապահում են, տրամադրում են փաստական տեղեկություններ, որոնք պրոֆեսիոնալ քաղաքական գործիչը կարող է օգտագործել, բայց որոնք իրենց ամբողջությամբ չեն ստեղծում քաղաքականությունը որպես գիտություն:

Հենց որ քաղաքական գործիչը կամ քաղաքագետը դուրս է գալիս հասարակության և պետության՝ որպես պատմականորեն ձևավորված երևույթների ուսումնասիրման շրջանակներից, ապա նա ընկնում է պետության և հասարակության կայացման գործընթացին առնչվող քաղաքական գործունեության ոլորտ:

Մինչդեռ քաղաքական գիտությունը, նշում է Կ. Մանհեյմը, ուսումնասիրում է տվյալ պահի ստեղծագործական ուժերը, որպեսզի հընթացս, այդ շարժվող ուժերի հոսանքից ստեղծի ինչ-որ կայուն բան: Այսպիսով, հարցը հանգում է հետևյալին. հնարավո՞ր է արդյոք այդօրինակ ընթացիկ, կայացող, ստեղծագործական ակտի մասին գիտելիք¹⁹:

Փորձելով բացահայտել քաղաքականության բնագավառում դրսևորվող այս ակնհայտ հակասության պատճառը, Կ.Մանհեյմը մեջ է բերում ավստրիացի սոցիոլոգ և քաղաքագետ Ա.Շեֆլեի (Albert Eberhard Friedrich Schäffle) դիքորոշումը, համաձայն որի պետական կյանքը կարելի է բաժանել երկու մասի: **Առաջինը** կազմված է այնպիսի երևույթներից, որոնք որոշակի կերպով արդեն ձևավորվել են և կանոնավորապես կրկնվում են (ամենօրյա պետական կյանք): **Երկրորդը՝** այնպիսի երևույթներից, որոնք կայացման գործընթացում են (քաղաքական կյանք կամ պարզապես՝ քաղաքականություն):

Օրինակ՝ եթե կայացած կամ արդեն հնացած վարչական գործունեության

17 Նույն տեղում, էջ 96:

18 Տե՛ս նույն տեղում:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 97:

հիմնախնդիրները լուծվում են գոյություն ունեցող կանոններին ու կարգադրություններին համապատասխան, ապա մենք գործ ունենք ոչ թե «քաղաքականության», այլ «կառավարման» հետ: Կառավարումը հենց այն բնագավառն է, որտեղ կարող ենք պարադիգմորեն²⁰ հասկանալ, ըմբռնել «ամենօրյա պետական կյանքը»: Հետևաբար, այնտեղ, որտեղ յուրաքանչյուր տվյալ պահի համար որոշումը կամ լուծումն ընդունվում է նախօրոք կայացված կարգադրությանը համապատասխան, խոսքը ոչ թե քաղաքականության, այլ հասարակական կյանքի այն բնագավառի մասին է, ուր երևույթները հանդես են գալիս իրենց քարացած, կայունացած, ձևավորված վիճակով:

Սակայն մենք անմիջապես ընկնում ենք «քաղաքականության» բնագավառ, երբ, օրինակ, դիվանագետը կնքում է որևէ համաձայնագիր, երբ պատգամավորները խորհրդարանում անց են կացնում կամ ընդունում են օրենքներ, երբ զբաղվում են նախընտրական քարոզարշավով, երբ առկա է ընդդիմադիր շարժում և այլն²¹:

Իհարկե, Կ. Մանհեյմն ընդունում է, որ իրականում այդպիսի մոտեցումների սահմանները չափազանց փոփոխական են, անկայուն, բայց, այնուամենայնիվ, նման մոտեցումը կամ տեսակետը («ամենօրյա պետական կյանք» և «քաղաքականություն» հարաբերակցությունը) նա ընդունում է որպես ելակետային կողմնորոշիչ: Քաղաքականության նկատմամբ այդպիսի սահմանային տեսակետը հնարավորություն է ընձեռում, ըստ Կ. Մանհեյմի, որպեսզի «մենք անդրադառնանք այն առանձնահատուկ դժվարություններին, որոնք բնութագրում են տեսության և պրակտիկայի փոխհարաբերությունները»²²:

Քաղաքագիտության մեթոդաբանական հիմնախնդիրների քննարկումները հաճախ ուղեկցվում են նաև ոչ ճիշտ մոտեցումներով կամ էլ ոչ ճշգրիտ ձևակերպումներով, այն է՝ «կարո՞ղ է արդյոք քաղաքագիտությունը լինել գիտություն» («может ли политология быть наукой») կամ «ինչպե՞ս է հնարավոր քաղաքագիտության՝ իբրև գիտության լինելիությունը» և այլն:

Փակագծերում մեր կողմից օգտագործված ռուսերեն ձևակերպումը պատահական չէ: Խնդիրն այն է, որ «политология»-ն կարելի թարգմանել նաև «քաղաքաբանություն» և օգտագործել այդ եզրույթը²³, որի դեպքում քաղաքաբանությունը հնարավոր է ներկայացնել որպես գիտություն, ինչպես օգտագործվում է որոշ գիտակարգերի (օրինակ՝ հոգեբանության (психология), մշակութաբանության

20 **Պարադիգմա** (հուն. *paradeigma* - օրինակ, եղանակ) - 1.9իտական տեսություն, որն արտացոլում է իրականության ինչ-որ կողմի էական գծերը: 2. Յուրահատուկ տրամաբանական մոդել, փոխկապակցված արժեքների համակարգ, որը սահմանում է իրականության ընկալման և մեկնաբանման եղանակներ, որոնց շրջանակներում հնարավոր են նոր գիտելիքի որոնումները: Հասկացության ներմուծումը գիտական լայն շրջանակ առավելապես կապված է ամերիկյան փիլիսոփա Թոմաս Սեմյուել Կուհի (Thomas Samuel Kuhn) անվան հետ, որն առաջադրեց գիտական հեղափոխությունների հայեցակարգը որպես պարադիգմաների պատմական որոշակի ժամանակաշրջանում գիտության մեջ գերիշխող հիմնահարցերի, դրվածքի և եղանակների ու հետազոտության մեթոդների հերթափոխում: Որոշ պարադիգմաներ կարող են ունենալ փիլիսոփայական բնույթ՝ ամեն ինչ ընդգրկող և ընդհանուր, մյուսները կարող են ներկայացնել միայն գիտական մտածողության որոշակի բնագավառ: Պարադիգման մույնքան կարևոր է գիտության համար, որքան դիտարկումներն ու փորձը: Սակայն ոչ մի պարադիգմա չի կարող լինել իրականության բոլոր փաստերի բացատրության բանալին:

21 Տե՛ս **Мангейм К.** Идеология и утопия. // Мангейм К. Диагноз нашего времени.-М., 1994, с. 98.

22 Նույն տեղում, էջ 99:

23 Տե՛ս **Վարդանյան Լ.** Քաղաքական գիտության կառուցվածքը, քաղաքական տեսության տեղը ու դերը քաղաքական գիտելիքի համակարգում // Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2010, 130.6, էջ 66:

(культурология) կամ իրավաբանության՝ որպես գիտության) համատեքստում: Տվյալ դեպքում՝ վերևում նշված ձևակերպումը կարծես թե ճիշտ չի հնչում՝ **գիտությունը կարող է լինել գիտություն:**

«Քաղաքագիտություն» բառի կազմությունը մեզ հուշում է, որ այդ գիտակարգի անվանումը առնչված է անտիկ պատմությունից հայտնի՝ «պոլիս» քաղաքական կազմավորմանը: Մյուս կողմից, հարուստ բովանդակություն ունի «լոգոս» հասկացությունը՝ հին հունական փիլիսոփայության գլխավոր հասկացություններից մեկը, որը գիտական շրջանառության մեջ է դրել Հերակլիտը (մ.թ.ա. 6-րդ դարի վերջ-5-րդ դարի սկիզբ): Նա լոգոսը սահմանում է որպես ունիվերսալ (համապարփակ) իմաստավորում և կեցության ձևի փոփոխման գործընթացի օրինաչափություն, ճակատագիր, որը նույնիսկ աստվածներին է իրեն ենթարկում: Ըստ Հերակլիտի՝ ամբողջ բնությունը կառուցված է համաձայն «ճշմարիտ դատողության», որի բացահայտումը հենց փիլիսոփայի խնդիրն է:

Այդ վաղ ժամանակներում լոգոս էին անվանում համաշխարհային օրենքը կամ բանականությունը, որը ձևավորում է աշխարհը, տիեզերքը: Հետագայում Պլատոնը (մ.թ.ա. 428/427-348/347) չիրաժարվելով լոգոսի այդպիսի ըմբռնումից, նրան ավելացրեց նաև դատողության, տեսության նշանակությունը: Իսկ արդեն Արիստոտելի (մ.թ.ա. 384-322) համար լոգոսը հանդես էր գալիս որպես սահմանում, ապացույց: Երկուսուկես հազարամյակի ընթացքում իր բովանդակային բազմիմաստության շնորհիվ «լոգոս»²⁴ հասկացությունն օգտագործվել է փիլիսոփայական շատ ուսմունքներում և զանազան համատեքստերում:

Իսկ երբ 1880 թվականին Կոլումբիայի համալսարանի խորհուրդը որոշում ընդունեց քաղաքական գիտության դպրոցի ստեղծման մասին, ապա դրանով նախանշվեց (առանց երկակի իմաստի) համապատասխան վերաբերմունք արդեն առկա գիտական դիսցիպլինի նկատմամբ: Սակայն 20-րդ դարի վերջերին ԱՄՆ-ում լույս տեսած «Քաղաքագիտություն: Հետազոտության մեթոդները» գրքում կարելի է կարդալ, որ քաղաքագիտությունը դեռևս «գիտություն» չի դարձել...²⁵:

Ինչպե՞ս վերաբերվել այս հարցադրումներին, և ի վերջո՞ ե՞րբ է սկսվում քաղաքական գիտության պատմությունը²⁶: Իհարկե, կարելի է ենթադրել (և այդպիսի ենթադրությունը նույնիսկ թվում է առավել բնական), որ գնահատման տարբերությունը թաքնված է հենց «գիտություն»²⁷ հասկացությունում:

Մրանով կարելի է բավարարվել, սակայն տվյալ պարագայում նույնպես առկա են տարաբնույթ կարծիքներ: Ահա թե ինչ է գրել 1929 թվականին Ամերիկայի

24 **Լոգոս** (հուն. logos) - միաժամանակ՝ բառ (արտահայտություն, խոսք) և իմաստ (հասկացություն, դատողություն, հիմք): Հետագայում տվյալ հասկացությունը սկսեց ընկալվել որպես «ուսմունք», այսինքն...«լոգիկա» հասկացության ավարտվող բարդ բառերի երկրորդ մասը, որը նշանակում է գիտություն, գիտելիք:

25 **Տե՛ս Мангейм Дж. Б., Рич Р. К.** Политология. Методы исследования. Перев. с англ. М., 1997, с. 23.

26 Այդ մասին տես Վարդանյան Լ. Քաղաքական գիտության կայացման և զարգացման հիմնական փուլերը // Քաղաքագիտություն, բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, - Եր.: Երևանի համալս. հրատ., 2007, էջ 42-62:

27 **Գիտություն** – մարդկային կենսագործունեության ոլորտ (կամ սոցիալական ինստիտուտ), որն ապահովում է գիտելիքի արտադրությունը, կուտակումը և օգտագործումը: Հասարակական գիտակցության համակարգում լինելով կենտրոնականը, այն մշակում է իրական աշխարհի երևույթների և օրենքների վերաբերյալ պատկերացումներ, որոնք կազմավորվել են էմպիրիկ և տեսական գիտելիքով: Գիտակցության այլ ձևերից գիտությունը տարբերվում է իր առավելագույն լիարժեքությամբ, համակարգայնությամբ, հիմնավորվածությամբ (հաստատված դիտարկմամբ, փորձարարությամբ, մաթեմատիկական և այլ մոդելավորմամբ, վիճակագրական ստուգմամբ), իսկ գլխավորը՝ իրականության արտացոլման օբյեկտիվությամբ, այսինքն՝ հարաբերական ճշմարտությամբ:

քաղաքական լրատվության նշանավոր ներկայացուցիչ, դեռևս Առաջին համաշխարհային պատերազմից հայտնի Ռուտեր Լիպմանը, քաղաքական գիտությունը ոչ ոք լրջորեն չի ընդունում, քանի որ ոչ ոք համոզված չէ, թե այն գիտություն է կամ էլ, որ այն որոշ չափով էական հենարան է քաղաքականության համար²⁸:

Ամերիկյան քաղաքագետ Ջ.Քեթլին մույն ժամանակում համառորեն պնդում էր, թե քաղաքագիտությունն արդեն կայացել է որպես գիտություն և որոշակի զարգացումներում ընդունակ է ունենալ խստագույնս կանխատեսող ուժ²⁹:

Ուրեմն՝ անհրաժեշտ է նշել, որ ինչպես ողջ 20-րդ դարում, այնպես էլ ներկայումս առկա են սկզբունքային տարածայնություններ վերոնշյալ հիմնախնդիրների շուրջ: Արդի ժուս քաղաքագետ Ա. Նիկիտինան, օրինակ, կարծում է, որ «կարող է քաղաքագիտությունը լինել գիտություն» հարցադրումը մեթոդաբանական տեսանկյունից ոչ ճիշտ ձևակերպում է, քանի որ առաջ է բերում հարցի ճշգրտման կարիք՝ նայած ի՞նչ գիտության³⁰: Այդպիսի տեսակետ են ներկայացնում նաև ժամանակակից քաղաքագետներ Ռ. Գուդինը և Հ. Կլինգեմանը, ըստ որոնց՝ հարցի պատասխանը շատ դեպքերում պայմանավորված է այն բանով, թե ինչ իմաստ է ներդրվում «գիտություն» եզրույթում³¹:

Եթե դատենք ըստ այն ձևակերպման, թե գիտությունը սահմանվում է որպես համակարգված ուսումնասիրություն, նպատակաուղղված է էմպիրիկ աշխարհի վերաբերյալ կարգավորված պատկերացումների առավել տարբերացված համակարգի ստեղծմանը (կարծում ենք՝ այս սահմանումն ավելի ընդունելի է), ապա դժվար թե հնարավոր լինի կասկածել, որ քաղաքականության ուսումնասիրությունը կարող է հավակնել գիտության կարգավիճակի:

Սակայն, երբ գիտությունը ներկայացվում է նաև որպես «համապարփակ օրենքների» կատարում և պահանջվում է բավարարել բոլոր պայմանները, ապա քաղաքական գիտությունը չի կարող հավակնել գիտության այդօրինակ կարգավիճակի, քանի որ այդ ամենն, իրոք, ի վիճակի չէ իրականացնելու:

Քանն այն է, որ չնայած քաղաքական գիտության՝ հիմնարար ճշմարտությունները համակարգելուն, նրա եզրակացություններն իրենց բնույթով անխուսափելիորեն կմնան որպես հավանականություններ: Քաղաքական գիտությունում տիրապետում են այնպիսի իրավիճակները, որոնք նկարագրվում են միայն «առավել կամ քիչ հավանական» եզրույթներով:

3. Քաղաքագիտությունը նոնոթետիկ և իդեոգրաֆիկ գիտությունների համակարգում

Քաղաքական գիտության նկատմամբ այսօրինակ, այսպես ասած՝ պոզիտիվիստական մոտեցման անընդունելիության պատճառը, առաջին հերթին, հետազոտման առարկայի (քաղաքականության) միանշանակ մեկնաբանությունն է: Եվ իսկապես, քաղաքական գիտության գլխավոր խնդիրը, որի դեմ ոչ

28 Տե՛ս Lippmann W. A Preface to Morals. N.Y., 1929, p. 260.

29 Տե՛ս Catlin G. The Science and Method of Politics. L., N.Y., 1927.

30 Տե՛ս Никитина А.Г. О том, „как возможна“ наука политология. Становление и основные методологические проблемы. // Полис, 1998, N 1, с. 148.

31 Տե՛ս Гудин Р. И., Клингеманн Х.-Д. Политическая наука как дисциплина // Политическая наука. Новое направление. М., 1999, с. 46. Տե՛ս նաև Ильин М.В. Основные методологические проблемы сравнительной политологии. // Полис, 2001, N 6, с. 141-142.

մի մասնագետ չի արտահայտվում, հավաստի վկայությունների հիման վրա քաղաքականության մասին ընդհանրացված գիտելիքի ստացումն է: Ինչպես գրում են ամերիկյան քաղաքագետներ Գ. Զինգը, Ս. Վերբան և Ռ. Կեոհեյնը, «գիտական հետազոտության իմաստն այն է, որ էմպիրիկ տեղեկությունների հիման վրա եզրակացություններ արվեն շրջակա աշխարհի վերաբերյալ»³²:

Ուստիև՝ ըստ Ա. Նիկիտինայի, «Կարո՞ղ է արդյոք քաղաքագիտությունը (политология) լինել գիտություն» հարցադրումը հնարավոր է, որ ունենա իրար բացառող մի քանի պատասխան. 1) կտրականապես դրական, 2) դրական, 3) կտրականապես բացասական³³: Եվ իսկապես, խնդիրն այն է, որ կան որակապես տարբեր կատեգորիաների գիտություններ: Այսպես, համաձայն գիտական իմացության ամենաընդհանուր դասակարգումներից մեկի՝ նոր կանտական տարբերակման, գիտությունների մի մասը վերաբերում է օրենքներին, այսինքն՝ ուսումնասիրում է ընդհանուր օրենքները, մյուս մասը՝ իրադարձություններին, այսինքն՝ ներկայացնում է առանձնահատուկը, եզակին: Առաջին դեպքում գիտական մտածողությունը **նոմոթետիկ** մտածողություն է, այն ձգտում է առանձնահատուկ, եզակի դրվածքներից անցում կատարել ընդհանուր կապերի ընթացմանը: Կամ ինչպես ընդունված է ներկայացնել գիտությունում՝ խոսքը նոմոթետիկ գիտակարգերի մասին է, որոնք կողմնորոշված են դեպի ընդհանուր օրենքների մշակումները: Երկրորդ դեպքում այն **իդեոգրաֆիկ** մտածողություն է, ուստի անրադառնում է առանձնահատուկի, եզակիի պարզաբանումներին³⁴ կամ ներկայացնում է իդեոգրաֆիկ (նկարագրական) գիտակարգերի տիպը, որոնք նկարագրում են այս կամ այն փաստերը և իրողությունները:

Այս տարբերակմամբ իդեոգրաֆիկ գիտությունների շարքում են **պատմագիտությունը** (արձանագրում է մարդկային կյանքի իրադարձությունները և դրանց հաջորդականությունը՝ անցյալի ժամանակային տիրույթում), **դասական** (նկարագրական) **աշխարհագրությունը** (արտացոլում է երկրի մակերեսին առկա օբյեկտները՝ տարածական տիրույթում), **աստղագիտության** որոշ բաժինները, որոնք նկարագրում են առանձին երկրային մարմինը (մարմինների խումբը), դրանց տեղադրությունը և այլն:

Կարծում ենք, կարելի է համաձայնել այն հետազոտողների հետ (Ա. Պանարին, Ա. Նիկիտինա և այլք), ովքեր նշում են, որ քաղաքագիտությունը կարող է հանդես գալ որպես իդեոգրաֆիկ գիտություն, չնայած, ըստ այս տեսակետի, «այն չի կազմում առանձին գիտություն, այլ հանդես է գալիս որպես պատմագիտության (քաղաքական պատմության) բաղադրամաս»³⁵: Ըստ այդմ՝ պատմաբանի խնդիրը անցյալի ինչ-որ արդյունքն իր բոլոր անհատական գծերով վերստեղծելն է կամ վերապատկերելը³⁶: Հաճախ այդպիսի «անցյալի արդյունք» է հանդես գալիս ժամանակի որոշակի հատվածում ինչ-որ մարդկային համակեցության վիճակը, վիճակ, որը դիտարկվում է իր բոլոր կողմերով: Քաղաքա-

32 King G., Keohane R., Verba S. Designing social inquiry. Princeton (N. J.): Princeton University Press, 1994, p.7.

33 Стѹ Никитина А.Г. О том, „как возможна” наука политология. Становление и основные методологические проблемы. // Полис, 1998, N 1, с. 147-156.

34 Стѹ Виндельбанд В. Прелюдии. СПб., 1904, с. 320-324.


35 Никитина А.Г. О том, „как возможна” наука политология. Становление и основные методологические проблемы. // Полис, 1998, N 1, с. 148.

36 Стѹ Виндельбанд В. Прелюдии. СПб., 1904, с. 324.

կան բաղկացուցիչն այդպիսի «արդյունքի», ինչպես և ամբողջ մարդկության պատմության անհրաժեշտ և կարևոր բաղադրամասն է: Սրանից բխում է, որ եթե ոչ որպես առանձին գիտություն, ապա որպես գիտական իմացություն (գիտելիք), քաղաքագիտությունը գոյություն ունի շատ վաղուց:

Ահա և հենց այս տեսակետը կարող է մեզ հուշել կամ ինքնին պայմանավորել, որ «կարո՞ղ է քաղաքագիտությունը («ПОЛИТОЛОГИЯ»-ն) լինել գիտություն» հարցադրումը իմաստագրկված է:

Այժմ փորձենք գծապատկերով ներկայացնել քաղաքական տեսության և քաղաքական գիտության հարաբերակցությունը նոմոթետիկ և իդեոգրաֆիկ գիտելիքների հետ՝ որպես գիտության օբյեկտի (քաղաքականության ոլորտի) տարբեր դրսևորումների ուսումնասիրություններ (տե՛ս գծապատկերը):



Ինչպես երևում է ներկայացված գծապատկերից, քաղաքական գիտության միջուկը կազմում են տեսությունը և նրան մոտ նոմոթետիկ գիտելիքի բնագավառները: Առավել հեռու մակերեսամասը կազմում են իդեոգրաֆիկ առանձին գիտակարգերը, որոնք հաճախ առնչվում են գիտելիքի այլ բնագավառների (պատմությանը, սոցիոլոգիային, հոգեբանությանը և այլն), ինչպես նաև՝ իրականության համապատասխան կողմերին: Ներկայացվող միջուկը և նկարագրական դիսցիպլինների մակերեսամասային կողմերը միավորվում են «միջակա գոտիով», որոնք ներկայացնում են, այսպես ասած՝ միջնորդ գիտակարգերը:

Քաղաքագիտության միջուկը կազմող գիտակարգերի կամ տեսությունների համար բնորոշ են մտահայեցողականությունը և դրա բնույթին համապատասխանող՝ մտային մախազժումները (տրամաբանական, մաթեմատիկական, սե-

միտտիկ և այլ մոդելներ): Մակերեսամասային գիտակարգերին բնորոշ են նկարագրությունները և դրանց համապատասխան փաստերի կուտակումը, մասնավորապես՝ տվյալների հնարավոր բազայի ստեղծումը: Իսկ միջնորդ գիտակարգերին բնորոշ են փորձը և ստուգումը, օրինակ՝ էքսպերիմենտների (փորձարարության, գիտական փորձերի), թեստերի կամ համեմատությունների ձևով³⁷: Ուստի, ինչպես նշում է պրոֆեսոր Մ.Վ.Իլյինը, այդ միջնորդ գիտակարգերը էմպիրիկ են՝ բառի ամենախիստ իմաստով³⁸:

Էմպիրիկ գիտակարգերն ըստ իրենց առարկայի տարբերվում են և՛ տեսական, և՛ նկարագրական դիսցիպլիններից: Այսինքն՝ եթե տեսական-նոմոթետիկ գիտակարգերի խնդիրն է առավելագույնս ձգտել բովանդակային տեսակետի, իսկ իդեոգրաֆիկների խնդիրը՝ նկարագրումն իրականացնել առավել սպառիչ և ծավալուն, ապա էմպիրիկների համար այս երկու մոտեցումներն էլ դժվարություն են ներկայացնում, քանի որ դրանց առարկան դրսևորվում է էքսպերիմենտի և համեմատության ձևով: Խնդիրն այն է, որ այս դեպքում առկա են քաղաքական երևույթներին կամ քաղաքականության որոշ բնագավառներին առնչված որոշակի յուրահատկություններ, որոնք փորձի և համեմատության միջոցով չեն ենթարկվում էմպիրիկ ուսումնասիրության: Օրինակ՝ Հայոց պետականությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունը կամ էլ այսինչ վարչապետի քաղաքական վարքագիծը: Իհարկե, կա «Հայոց պետականության պատմություն», և հնարավոր է համապատասխան տեսություն կառուցել: Կարելի է այս կամ այն վարչապետի վարքագիծը լիարժեք նկարագրել և փաստագրել, ինչպես նաև տեսականորեն իմաստավորել: Բայց չի կարելի փորձարարությամբ զբաղվել այդ առարկայական բնագավառների շուրջ: Կարելի է համեմատել, գուցե որդել Հայոց պետականության տարբեր իրավիճակներ՝ Արտաշիսյանների, Արշակունիների, Բագրատունիների թագավորությունները կամ առաջին, երկրորդ, երրորդ հանրապետությունները և այլն: Բայց դրանք արդեն կլինեն մեկը մյուսից որակապես տարբեր պետությունների կամ կազմավորումների համեմատման փորձեր: Այլապես՝ վարչապետի քաղաքական վարքի էքսպերիմենտի առնչությամբ պահանջվում է «ստեղծել» նոր առարկա, օրինակ՝ հետխորհրդային վարչապետների գործունեության կամ Ղարաբաղյան պատերազմին հաջորդած ժամանակաշրջանի վարչապետների գործունեության համեմատման փորձ: Այս դեպքում առարկայական բնագավառը կարող է արձանագրվել որպես նախկին առարկայի արտաքին կողմ:

Նման դատողությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ էմպիրիկ գիտակարգերի առարկան չի լինում համընդհանուր և հնարավորինս ամբողջական: Այն սահմանափակված է մեթոդի կիրառմամբ: Օրինակափ է նաև ասել, որ էմպիրիկ գիտակարգերում մեթոդը (ներառյալ համեմատականը) փոքրացնում է առարկայի սահմանները և դրանով իսկ ներթափանցում է նրա մեջ, ներգրավվում է նրանում: Արդյունքում՝ առարկայի սիստեմատիկ յուրացման ընթացքում ստացվում է որոշակի մեթոդի ձևավորած առանձնահատուկ (ոչ ունիվերսալ, բայց ոչ էլ ունիկալ) առարկա:

37 էքսպերիմենտը և համեմատումը էմպիրիկ գիտելիքի ստացման հիմնական եղանակներն են, որոնք ընթանում են վերլուծական գործիքների (մոդելների կամ կանոնների) միջոցով դիսկրիպտիվային տվյալների մեթոդական զուգակցմամբ:

38 Տե՛ս **Ильин М.В.** Основные методологические проблемы сравнительной политологии. // Полис, 2001, N 6, с. 141:

Էմպիրիկ գիտակարգերի մեթոդաբանությունն իր կարևորության առումով մատուցվում է որպես էմպիրիկ տեսություն³⁹: Առանձին հետազոտությունների կամ հետազոտական ծրագրերի համատեքստում էմպիրիկ տեսությունը ներկայացվում է ինտելեկտուալ նախագծումների ձևով, որոնք, ըստ ամերիկյան սոցիոլոգ Ռ. Մերտոնի (Merton R.), կոչվում են «միջին մակարդակի տեսություններ»։ Համաձայն Ռ. Մերտոնի՝ այդպիսի տեսությունները միջանկյալ օղակներ են ամենօրյա հետազոտական գործընթացում ծնվող փոքր աշխատանքային վարկածների և ունիվերսալ դատողությունների միջև։ Վերջիններս ընդգրկում են գլխավոր կոնցեպտուալ նախագծերը, որոնց հիման վրա էլ բացատրում են սոցիալական միատեսակ վարքագծի էմպիրիկորեն դիտարկվող մեծաթիվ դրսևորումների առկայությունը⁴⁰: Այլ խոսքով՝ «միջանկյալ օղակը» հենց էմպիրիկ տեսությունն է (empirical theories) կամ հարաբերակցման փորձը, որը հատուկ ստեղծված է մեթոդաբանական միջոցներով իրականությունն ունիվերսալորեն տեսնելու իր յուրահատուկ նկարագրությամբ։

«Արդյո՞ք քաղաքագիտությունը (քաղաքաբանությունը) կարող է հանդես գալ որպես գիտություն» (իր ամբողջական իմաստով՝ որպես «էմպիրիկ» գիտություն՝ նունթեստիկ գիտության բնագավառ⁴¹) հարցադրման առանցքային խնդիրը, կարծում ենք, օրենքների հիմնախնդիրն է՝ ինչպես քաղաքական, այսինքն՝ օրենքներ, որոնք գործում են քաղաքական կեցության ոլորտում, այնպես էլ քաղաքագիտական, որոնք ինքնին առաջինների արտացոլումն են գիտական գիտելիքում։ Պետք է նշել, որ առավել սուր բանավեճերն ընթանում են հենց այս թեմայով՝ օրենքների հիմնախնդրի առնչությամբ։

Որոշ հետազոտողներ նշում են, որ քաղաքագիտական օրենքներ՝ որպես այդպիսիք, կամ չկան⁴², կամ էլ հազվադեպ են դրսևորվում, ընդ որում՝ այս տեսակետը պայմանավորվում է նաև քաղաքական գիտության երիտասարդ լինելու հանգամանքով։ Նոր ձևավորված կամ երիտասարդ գիտությունից (իսկ քաղաքագիտությունը համարվում է այդպիսին⁴³) չի կարելի պահանջել, որ նրան հայտնի լինեն բազմաթիվ օրենքներ։ «Քաղաքական իմացության մասին հարցը՝ քաղաքական գործընթացները նկարագրելու, բացատրելու և կանխատեսելու քաղաքական գիտության հնարավորության հարցը, սուր կերպով է առաջադրված։ Մեր հասարակությունը տուժում է քաղաքական գործիչների անգրագիտությունից, գործող մեթոդների փորձերից ու սխալներից»⁴⁴, - նշում է ռուս քաղաքագետ Ա. Պանարինը։ Իհարկե, ճիշտ է ասված, բայց կցանկանայինք նշել, որ հարցի սրությունը պայմանավորված է նաև քաղաքագիտության ներկայիս կարգավիճակով։

39 Վերջին ժամանակներս փորձեր են ձեռնարկվում առաջարկել «փիլիսոփայական տեսությունից» տարբերվող հատուկ «էմպիրիկ քաղաքական տեսություն» կառուցված ստուգման ձևական-տրամաբանական ընթացակարգերի և չափանիշների վրա։ Այս մասին տես՝ Monroe K.R. (ed.) Contemporary Empirical Political Theory. Berkeley, Los Angeles, 1997.

40 Տես՝ Merton R. Social Theory and Social Structure. N. Y. 1968.

41 Նունթեստիկ գիտությունները լինում են «էմպիրիկ» (ֆիզիկական, քիմիական, կենսաբանությունը, սոցիոլոգիան և այլն) և «մաքուր» (մաթեմատիկական, սիմվոլիկ տրամաբանությունը և այլն)։

42 Ավելին, առաջադրվում է այն կարծիքը, որ քաղաքականության կամ միջազգային հարաբերությունների ունիվերսալ տեսություն ստեղծելը սկզբունքորեն անհնար է։ Տես՝ Поздняков Э. А. Философия политики. 2-е изд. Ч. 1. М., 1994, с. 57. Տես նաև՝ Денкэн Ж.-М. Политическая наука. М., 1993, с. 40-42.

43 Տես՝ Վարդանյան Լ. Քաղաքական գիտության կառուցվածքը. քաղաքական տեսության տեղն ու դերը քաղաքական գիտելիքի համակարգում // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, Եր., 2010, 130.6., էջ 61-62։

44 Панарин А. С. Философия политики. М., 1996, с. 395.

Կարելի է համաձայնել արդի շատ հետազոտողների կարծիքներին, որ քաղաքագիտությունը իր կայացման փուլում է, երբ որոշ հատկանիշներ, որոնք բնորոշ են արդեն ձևավորված «Էմպիրիկ» գիտություններին, քաղաքական գիտության ասպարեզում դեռևս լրիվ զարգացած չեն և նույնիսկ բացակայում են: Հիշեցնենք, որ այս մտտեցումն առկա էր դեռևս 20-րդ դարի 20-ական թվականներին՝ գերմանացի մտածող Կարլ Մանհեյմի վերևում բերված հարցադրման մեջ. «...այստեղ մենք իսկապե՞ս բխվում ենք ճանաչողության սահմանին, որը խախտելն ընդհանրապես անհնար է» (ընդգծումը մերն է- Լ.Վ.): Հասկանալի է, որ այս ամենից չի բխում, թե քաղաքական գիտությունը չի կարող ձևավորել էմպիրիկ գիտությանը հատուկ հատկանիշներ, և որ այդ ճանաչողության սահմանն, իրոք, միայն ժամանակի խնդիր է:

Քաղաքական գիտության կայացման ճանապարհին կան շատ դժվարություններ և հիմնախնդիրներ, որ նշում են քաղաքագետները: Այսպես, երբ լայնորեն տարածվեց Պոպեր-Գեմպելի մոդելը, որոշ գիտությունների, հատկապես սոցիալական գիտությունների շատ ներկայացուցիչներ նրան առնվազն թերահավատորեն էին վերաբերվում: Այս մոդելի հիմնական դրվածքը պատկերացվում էր հետևյալ կերպ. ֆիզիկան՝ որպես գիտություն, իր հաջողություններով պարտական է իր դեդուկտիվ⁴⁵ բացատրություններին, այսինքն՝ ամեն ինչ պայմանավորված է այն բանով, թե ինչպիսի բացատրություն է ստանում, և այս առումով այլ գիտակարգերը կարող են հաջողություն ունենալ միայն այն դեպքում, եթե դրանք կարող են բավարարել նման բացատրական պահանջմունքը⁴⁶: Բայց եթե որպես բացատրման չափանիշ դիտարկենք դեդուկտիվ մոդելը, ապա սոցիալական գիտությունների բացատրման հնարավորությունը խստիվ սահմանափակվում է⁴⁷:

Իսկապես, հիմնախնդիրը կարող է լուծվել մեթոդաբանական պլանով: Եվ շատ հեղինակներ վստահ են, որ չի կարելի քաղաքական գիտությունն ամբողջությամբ հեռացնել տեսական մոդելից⁴⁸: Ավելին, ամենևին էլ պարտադիր չէ, որ բացատրությունը լինի ամբողջապես պատճառական, այսինքն՝ բացատրության համար կարող են օգտագործվել նաև այլ՝ կառուցվածքային, գործառնական, համեմատական, վարքաբանական և այլ մեթոդներ: Այսպես, եթե եվրոպական քաղաքագիտությունում հիմնականում կիրառվում է օբյեկտների պատճառական-գենետիկ վերլուծությունը, ապա ԱՄՆ-ում քաղաքագետներն առավելապես նախընտրում են ֆունկցիոնալ և կառուցվածքային վերլուծությունները: Եվ առհասարակ, պարզ է, որ արդի քաղաքագետներն իրենց հետազոտությունների և վերլուծությունների ժամանակ առավելապես օգտագործում են այլ գիտություն-

45 **Դեդուկցիա** (լատ. deduction-բխեցում, արտածում, արտածություն), կշռադատության (մտահանգման) հիմնական եղանակներից և հետազոտության մեթոդներից մեկը: Լայն առումով դեդուկցիան հասկացվում է ընդհանրապես ամեն մի բխեցում: Ավելի առանձնահատուկ և առավել գործնական իմաստով տրամաբանական օրենքների հիման վրա պնդման (հետևության) հավաստի ապացուցում կամ բխեցում (արտածում) մեկ կամ մի քանի ուրիշ պնդումներից (նախադրյալներից): Դեդուկտիվ բխեցման դեպքում հետևությունները պարունակվում են նախադրյալների մեջ՝ թաքնված ձևով, և դրանք պետք է արտածվեն նախադրյալներից տրամաբանական վերլուծության մեթոդների կիրառմամբ: Այսինքն՝ դեդուկցիան մտահանգման ձև է, որում նախադրյալի և եզրակացության կապը հենվում է տրամաբանական օրենքի վրա, և որում տրամաբանական անհրաժեշտությամբ եզրակացությունը բխում է նախադրյալից:

46 Տե՛ս **Meehan E.J.** Explanation in Social Science. A System Paradigm. Homewood, 1968. p. 3.

47 Տե՛ս նույն տեղում, էջ 2:

48 **Սողել** - էմպիրիկ տվյալների տեսական պատկերացում, որն ուշադրությունը կենտրոնացնում է առավել նշանակալի փոխկապակցություններին և փոխազդեցություններին և դրանով օժանդակում է հիմնախնդրի ընդհանուր ըմբռնմանը:

ների շրջանակներում հաստատված և ուշադրության արժանի սկզբունքներ ու կանոններ, գիտական օրենքներ ու մեթոդներ:

Քաղաքագետները (իհարկե, նաև այլ գիտակարգերի ներկայացուցիչները) օգտագործում են բացատրման մի այնպիսի մեթոդ, ինչպիսին մոդելավորումն է: Հաճախ մոդելները միայն նկարագրում են, բայց դրանք կլինեն շատ ավելի արժեքավոր, եթե կարողանան նաև բացատրել: Մոդելավորումն օգտագործվում է այն դեպքերում, երբ հետազոտողին հետաքրքրող օբյեկտն ինչ-ինչ պատճառներով ուղղակի կամ անմիջական հետազոտության ենթարկել հնարավոր չէ (դժվար է, թանկ է և այլն): Այդպիսի դեպքերում այդ օբյեկտը (տվյալ դեպքում՝ որպես բնօրինակ) փոխարինվում է նրան նման մեկ այլ օբյեկտով (այսինքն՝ մոդելով), որը ավելի հեշտ հետազոտություն (մատչելի, թեթև և այլն) իրականացնելու հնարավորություն է տալիս: Եթե հետազոտության ժամանակ առաջանում են խնդիրներ, մասնավորապես, երբ հետազոտողը լավ չի տիրապետում համապատասխան օբյեկտի համար անհրաժեշտ սկզբունքներին, կանոններին կամ այդ օբյեկտին առնչվող օրենքներին, ինչի պատճառով էլ չենք կարող այն ո՛չ բացատրել, ո՛չ էլ հետազոտել, ապա պետք է փնտրել նրան նման մեկ այլ օբյեկտ (մոդել), որի սկզբունքներն ու օրենքները մեզ քաջ ծանոթ են: Այս դեպքում արդեն հնարավոր կլինի վերլուծել և հետազոտել բնօրինակը (օբյեկտը) այն մոտեցմամբ, որով մենք իրականացնում ենք կոնկրետ ճանաչողական գործառնությունները տվյալ մոդելի վերաբերյալ:

Այսպիսով, մոդելների գործառնությո՞ւնը հետևյալն է. ինչպե՞ս կարելի է առավել ճշգրտորեն վերստեղծել օբյեկտ-բնօրինակը: Բայց կոնցեպտուալ մոդելները ոչ մի կերպ չեն վերստեղծում օբյեկտը: Անիմաստ կլինեն, օրինակ խոսել այն մասին, որ տնտեսության համակարգչային մոդելը պետք է ֆիզիկական մասնություն ունենա տնտեսության հետ: Կոնցեպտուալ մոդելներն առավելապես հանդես են գալիս որպես վերլուծության գործիքներ: Խնդիրն այն է, որ փաստերը դեռևս բավարար պայման չեն, դրանք անհրաժեշտ է ի մի բերել և մեկնաբանել: Մոդելները օգնում են հենց այդ խնդրի լուծմանը, քանի որ դրանցում ներդրված են որոշակի փոխհարաբերություններ, որոնք այս կամ այն կերպ լուսաբանում են համապատասխան էմպիրիկ տվյալների իմաստը և նշանակությունը: Քաղաքական վերլուծությունում լավագույն մոդելներից մեկը ամերիկյան քաղաքագետ Դեյվիդ Իստոնի մշակած քաղաքական համակարգի մոդելն է:

Այդպիսի մոդելային բացատրությունները և կանխատեսումները հատկապես բնորոշ են երիտասարդ գիտություններին, որոնց ներհատուկ օրենքները շատ չեն և հղկված չեն: Բայց սա չի նշանակում, թե մոդելավորումը միշտ տալիս է մոտավոր և ոչ վստահելի արդյունքներ: Ներկայումս այդ «տեխնոլոգիան» լավ մշակված է ոչ միայն ընդհանուր մեթոդաբանական, այլև որոշակի գիտական մակարդակով (այնպիսի մաթեմատիկական խիստ համակարգեր, ինչպիսիք են նմանակային տեսությունը, մոդելների տեսությունը և այլն, հնարավորություն են տալիս մոդելային հետազոտությունում հասնելու մեծ ճշգրտության և հուսալի արդյունքի):

Մոդելավորման մեթոդն ունի համընդհանուր բնույթ, քանի որ այն կիրառվում է տարբեր հետազոտական գործընթացներում, ընդ որում՝ տարբեր ձևերով: Այս-

պես, ուսումնասիրելով ընտրությունների ինչ-որ գործընթաց, մենք սկզբում «կարող ենք օգտագործել... քաղաքական համակարգի մոդելը՝ ապագայի մոտավոր կանխատեսման համար»⁴⁹: Իհարկե, հետագայում կարող ենք ուսումնասիրությունների ժամանակ դիմել նաև մաթեմատիկական մոդելավորման, որը կօգնի բացատրել մեր մոտավոր կանխատեսումները: Եվ առհասարակ, մոդելային բացատրությունների և կանխատեսումների արժեքը միայն այն չէ, որ դրանք իրականացվում են այնպիսի պայմաններում, երբ մենք չգիտենք հետագոտվող օբյեկտի օրենքները, այլև այն, որ դրանք օգնում են բացահայտելու այդ օրենքները:

4. Քաղաքագիտության օրենքների և սկզբունքների հարաբերականությունը

Օրենքների հիմնախնդրին առնչվող բանավեճում որոշ հետազոտողներ, ավելի շուտ՝ հոռետեսների երկրորդ խումբը, համարում է, որ առկա են լուրջ դժվարություններ, որոնք բարդացնում են քաղաքագիտական օրենքների ձևավորումը կամ էլ այն դարձնում են անհնարին: Այս տեսանկյունից առկա են ոչ քիչ փաստարկներ, որոնց նշանակալի մասը վերաբերում է քաղաքագիտության ուսումնասիրած օբյեկտի առանձնահատկություններին:

Այսպես, բավականին տարածված են քաղաքական երևույթների չափից ավելի համընդհանուր, բարդ և բազմանշանակ լինելու մասին կարծիքները: Օրինակ՝ Ժ.-Մ. Դենկենը պնդում է, թե քաղաքական աշխարհն այնքան դժվար ու բարդ է, որ դրա ներսում տեղի ունեցող ռացիոնալ գործողությունների արդյունքներն այնքան էլ վստահելի չեն: Առաջնային նշանակություն ունեցող սկզբունքներում անգամ ամենաաննշան տարբերությունները կարող են հանգեցնել նույնանման գործողությունների արդյունքների տարբերության: Օրինակ՝ ավտորիտար համակարգի ազատականացումը կարող է մի կողմից հանգեցնել դրա վերակենդանացման, իսկ մյուս կողմից՝ կործանման: Այս տրամաբանությամբ՝ քաղաքական գիտությունը միայն նկարագրական գիտություն է և հետևապես նա չի կարող հավակնել սկզբունքների, օրենքների ձևավորման⁵⁰:

Այնուհետև հեղինակը պնդում է, թե քաղաքական գիտության գիտական ձեռքբերումը կարող է լինել բացառապես քաղաքական այս կամ այն դրսևորումների դասակարգման և դրանց տիպաբանական վերլուծության միջոց: Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ համընդհանրականությունը և բազմանշանակությունը քաղաքագիտության օբյեկտների համար առանձնահատուկ բնույթ չունեն: Ընդհակառակը՝ սրանք բնորոշ են իրականության ամեն մի օբյեկտի, և խոսել նրանց մեծ կամ փոքր «մակարդակի» կամ «աստիճանի» մասին, ուղղակի անիմաստ է, քանի որ կարող են ունենալ միան առաջին աստիճան, որն էլ կլինի հենց վերջինը: Եվ եթե այս հատկանիշները չեն հակասում այլ էմպիրիկ գիտությունների սկզբունքների կամ օրենքների հիման վրա հետազոտվող օբյեկտի մեկնաբանմանը և հնարավոր կանխատեսմանը, ապա ինչու՞ դրանք պետք է խոչընդոտ լինեն քաղաքական գիտության համար:

49 Мангейм Дж. Б., Рич Р. К. Политология. Методы исследования. Перев. с англ. М., 1997, с. 476-477.

50 Стен Денкэн Ж.-М. Политическая наука. М., 1993, с. 40-42.

Իսկապես, անհերքելի է, որ գիտական սկզբունքը համընդհանրական է և վերացական, իսկ միավոր օբյեկտը՝ որոշակի և յուրահատուկ: Հենց գիտության ճկունությունն էլ պետք է լինի այն, որ նա կարողանա առանձին օբյեկտների մասին գիտելիքներից հատակորեն անցնել դեպի որոշակի և հաստատուն սկզբունքի կամ օրենքի հաստատագրումը: Արդյո՞ք գիտությունը կարող է հաղթահարել այդ արգելքը նաև հակառակ ուղղությամբ՝ այն դեպքում, երբ առանձին օբյեկտների հետազոտման համար անհրաժեշտ է կիրառել արդեն ակնհայտ և հաստատուն օրենք կամ սկզբունք: Այսպես՝ բացատրման գործընթացների ժամանակ այդ արգելքը հաղթահարվում է «խաչվող» գործողությունների միջոցով: Մի կողմից, որոշակի օբյեկտը հնարավոր է հեշտությամբ փոխարինել վերացական օբյեկտով: Քանզի երբ փորձում ենք բացատրել այս կամ այն երևույթը կամ օբյեկտը, մենք այն վերլուծում ենք ոչ միայն բացառապես ուսումնասիրվող օբյեկտի շրջանակներում, այլև համակարգայնորեն, բայց նշելով այն կարևոր բնութագրիչները, որոնք հետազոտությանը ճիշտ ընթացք կտան: Միայն այս իմաստով, այսինքն՝ որոշակի դրույթներով նկարագրվող առանձին իրադարձություններն են օրենքներով բացատրելի⁵¹:

Մյուս տարածված փաստարկներից մեկն էլ այն է, որ քաղաքական գործընթացները չափազանց արագ են ընթանում: Ինչպես նկատել է ռուս քաղաքագետ Ա. Ս. Պանարինը, բոլոր անցումային ժամանակաշրջաններում սոցիալական իրականության ճանաչումը հատկապես դժվարանում է, քանի որ փոփոխությունների արագությունը փոքրացնում է իրականության ռացիոնալ գնահատման և կանխատեսման մեր հնարավորությունները⁵²: Հենց այս համատեքստում է ֆրանսիացի քաղաքագետ Պ. Նոյակի ճիշտ նկատառումը՝ քաղաքականությունն ամենաարագ, հետևաբար և ամենաանորսալի փոփոխությունների բնագավառ է, ինչի պատճառով էլ քաղաքական գիտությունն ի գործու չէ տալու ո՛չ վերջնական աշխարհայացք, ո՛չ էլ ինքնուրույն մեթոդ⁵³:

Իհարկե, այս փաստարկումը նույնպես կարելի է վիճարկել: Էմպիրիկ գիտությունները «արագընթաց» գործընթացների հետազոտման հարուստ փորձ ունեն: Համենայնդեպս կան այդպիսի գործընթացների վերաբերյալ համապատասխան տեսություններ և սկզբունքներ: Նշանակում է՝ խնդիրն ամենևին էլ երևույթների զարգացման արագությունը չէ: Եվ իսկապես, դիտարկումներից և քննարկումներից պարզվում է, որ խնդիրն այլ է:

Քաղաքականության յուրաքանչյուր սուբյեկտ գործում է ժամանակի սղության պայմաններում: Նման իրավիճակում գործելուն նրան դրդում են բազմաթիվ գործոններ, մասնավորապես՝ ընտրազանգվածը, մրցակիցները, ինչպես նաև՝ հենց քաղաքական գործընթացի տրամաբանությունը⁵⁴: Եվ այս դեպքում խնդիրն այն չէ, թե մեր իմացությունը հետ է մնում քաղաքական արագընթաց գործողությունների մրցավազքում, և այդ պատճառով անկարող է դրանք որսալ, այլ այն, որ ճանաչողության արդյունքները կամ գիտական օրենքները ձեռք են բերվում բավականին ուշ, ինչի հետևանքով էլ դրանք անկիրառելի են հենց նույն գործընթա-

51 Տե՛ս **Hempel C. G.** Reasons and Covering Laws in Historical Explanation. – Philosophy and History, N.Y., 1963, p. 149. Ռուսերեն թարգմանությամբ այս հոդվածը տե՛ս **Философия и методология истории.** М., 1977.

52 Տե՛ս **Панарин А. С.** Философия политики. М., 1996, с. 395.

53 Տե՛ս **Noack P.** Was its Politik? Eine Einführung in ihre Wissenschaft. München – Zürich, 1978.

54 Տե՛ս **Панарин А. С.** Философия политики. М., 1996, с. 395.

ցի նկատմամբ:

Փաստացի այդպես է լինում բոլոր ժամանակներում, բոլոր հետազոտական աշխատանքների ընթացքում: Գիտական օրենքների ձևավորումը տեղի է ունենում առանձնակի օբյեկտների խոր և բազմակողմանի ուսումնասիրությունների արդյունքում, իսկ դրանց հիման վրա կարող են հետազոտվել այլ առանձին օբյեկտներ: Այնպես որ այս տեսանկյունից քաղաքական գիտությունը ոչնչով չի տարբերվում «էմպիրիկ» այլ գիտություններից:

5. Սուբյեկտիվ գործոնի հաշվառման անհրաժեշտությունը

Մի շարք փաստարկումներ ապավինում են այն իրողությանը, որը մենք սովորաբար անվանում ենք սուբյեկտիվ գործոն: Նկատի ունենալով, որ նման փաստարկումներն անհրաժեշտ բաղկացուցիչ են քաղաքական երևույթների բացահայտման ճանապարհին, լավագույն դեպքում դրանց մասին խոսում են որպես անհրաժեշտ պահանջի, իսկ վատագույն դեպքում ուշադրություն են հրավիրում այդօրինակ տեսակետի սկզբունքային անկատարության վրա: Վերջին հաշվով դրանք բոլորն էլ հանգում են նույն իրավիճակին: Մասնավորապես՝ խոսքն այն մասին է, որ քաղաքական հետազոտությունն ինքնին երկու սուբյեկտների փոխգործակցության գործընթաց է: Սուբյեկտներից մեկը հետազոտվող օբյեկտի կարևոր բաղկացուցիչն է կամ տարրը, իսկ մյուսի դերում հանդես է գալիս հետազոտող քաղաքագետը: Վերջինիս համար, և հենց դրանում է «չարիքի արմատը», տվյալ փոխազդեցությունը միշտ չէ, որ հանդես է գալիս իբրև լիովին էքսպլիցիտային⁵⁵, այսինքն՝ այն իր ինչ-որ մասով անվերահսկելի փոխազդեցություն է: Պետք է նշել, որ դա միայն քաղաքագիտությանը բնորոշ երևույթ չէ: 20-րդ դարում այս հանգամանքին բախվել են նաև բժշկությունը, հոգեբանությունը, ֆիզիկան (հենց միկրոֆիզիկայից էլ փոխառվել է «անվերահսկելի փոխազդեցություն» հասկացությունը):

Սոցիալական կանխատեսումը երբեք չեզոք չի լինում: Ճշմարիտ է այն, թե ոչ, կանխատեսող վերլուծությունն անխուսափելիորեն առաջացնում է գործողության նկատմամբ որոշակի մղում, թելադրանք⁵⁶: Սոցիալական կանխատեսումները որոշակի պայմաններում կարող են ազդել կանխատեսվող իրադարձությունների վրա, միաժամանակ կա՛մ նպաստելով, կա՛մ էլ խանգարելով նրանց իրականացմանը և այս կամ այն կերպ մոդիֆիկացնելով (վերափոխելով) տվյալ գործընթացը: Այս դեպքում կանխատեսող տեղեկատվության և իրական հասարակական գործընթացների միջև առկա է որոշակի հակադարձ կապ, որի գործառնությունը բացատրվում է այն բանով, որ ապագա սոցիալական սուբյեկտին՝ անհատին, խմբին, դասակարգին վերաբերող և նրա շահերին անդրադարձող կանխատեսումը, հայտնի դառնալով այդ սուբյեկտին, ազդեցություն է ունենում նրա գործունեության վրա, որով էլ պայմանավորում է իրադարձությունների հետագա ընթացքը⁵⁷: Օրինակ՝ ենթադրենք, թե մեզ հաջողվել է բավականաչափ ճշգրտությամբ

55 էքսպլիցիտային (անզլ. explicit, լատ.explicite ակնհայտ, բաց), տրամաբանությունում՝ ակնհայտ, բաց, պարզ, հասկանալի:

56 Տե՛ս Ясперс К. Смысл и назначение истории. М., 1991, с. 163.

57 Տե՛ս Гендин А. М. “Эффект Эдипа” и методологические проблемы социального прогнозирования. — “Вопросы философии”, 1970, N 5, с. 80.

ձևավորել այն բոլոր կամ հիմնական սկզբունքներն ու օրենքները, որոնք կարգավորում են ընտրական գործընթացը և որոնց հիման վրա էլ կանխատեսում ենք ընտրությունների արդյունքները: Սակայն այն թեկնածուն, որն ըստ մեր կանխատեսման՝ հաջողության ոչ մի շանս չունի, իմանալով այդ մասին, լարում է իր ողջ ուժերը և մեծ եռանդով անցկացնում մնացյալ ընտրական կամպանիան՝ հաջողության հասնելով այն անձի նկատմամբ, որն առավելություն ուներ և որին մեր կանխատեսումը, փաստորեն, ավելորդ ինքնավատահություն է հաղորդել:

Այժմ անդրադառնանք «անվերահսկելի փոխազդեցության» մեկ այլ ձևի: Բավական երկար ժամանակ լայնորեն տարածված էր այն կարծիքը, թե գիտնականն իրականում սառնասիրտ վերլուծաբան է և անտարբեր է վերաբերվում հետազոտվող օբյեկտին: Բայց այնուհետև պարզ է դարձել, որ դա ամենևին էլ այդպես չէ: Իսկ ավելի ճիշտ՝ պետք է ընդունել, որ հասարակական գիտություններում չեզոքության վերաբերյալ պատկերացումներից հարկավոր է վերապահորեն մոտենալ: Միայն բնական և ճշգրիտ գիտություններում է հնարավոր այդպիսի բան, երբ հետազոտողն իր առարկան դիտարկում է օբյեկտիվորեն, սառնասիրտորեն և առանց նախօրոք ձևավորված սպասումների: Քաղաքական գիտությունում այդպիսի բան կարող է լինել շատ հազվադեպ կամ էլ ընդհանրապես չի լինում: Մեզանից յուրաքանչյուրն ունի սեփական ընտանեկան և սոցիալական փորձը, տնտեսական դրությունը, անձնական համակրանքը, և այս ամենն իր ազդեցությունն է քողում այն իրողության վրա, թե ինչպես ենք մենք ընկալում քաղաքականությունը և ընդհանրապես՝ շրջակա աշխարհը: **Ռա նշանակում է, որ քաղաքական գիտության համար գիտական օբյեկտիվությունն առանց անկողմնակալության, անաչառության և չեզոքության մնում է անհասանելի նպատակ, որքան էլ որ կատարելագործվեն նրա հետազոտական մեթոդները:**

Եզրակացություններ

Մենք քննարկեցինք մի շարք դժվարություններ, որոնք ծագում են քաղաքագիտության կայացման ճանապարհին: Դրանց մի մասը, կարծում ենք, երևակայական բնույթ ունեն, մյուսներն առավել լուրջ դիտարկումների կարիք ունեն, բայց ի վերջո՝ հաղթահարելի կլինեն քաղաքագիտության, ինչպես նաև հասարակագիտական այլ գիտակարգերի հետագա զարգացման ընթացքում:

Հասարակագիտական գիտելիքների դիֆերենցիացիայի բազմադարյան գործընթացն ավարտվեց համեմատաբար ինքնուրույն գիտական դիսցիպլինների ի հայտ գալուն պես, որոնցից մեկն էլ քաղաքագիտությունն է: Արդի քաղաքական կյանքը վկայում է քաղաքական ինստիտուտների բովանդակության և կառուցվածքի բարդացման մասին: Նրանցում գիտական պարադիգմաների որոնման արդյունավետությունը կապված է ինչպես ձևավորվող քաղաքական իրականության, այնպես էլ այլ գիտությունների հիմնախնդիրների հետ, որոնք այս կամ այն կերպ ուղղորդված են քաղաքական գործընթացների հետազոտությանը: Այս առումով **մի դեպքում** նկատի են առնվում այն ուսումնասիրությունները, որոնք կապված են քաղաքագիտության մեթոդաբանական ապարատի մշակման և պարզեցման հետ և ուղղված են քաղաքական երևույթների քննությանը՝ ինչպես տեսական, այնպես էլ կիրառական առումով: **Երկրորդ դեպքում** կարևորվում են սոցիալ-քաղաքական

և հումանիտար գիտությունների մասնագետների միջև ընթացող բանավեճերը, որոնք կապված են քաղաքական գիտության տեսական և փիլիսոփայական հիմքերի որոնումների հետ: Անհրաժեշտ է ընդունել նաև, որ մի շարք գիտություններ (սոցիոլոգիա, տնտեսագիտություն, հոգեբանություն և այլն) քաղաքագիտության այս կամ այն ոլորտը դարձնում են իրենց ուսումնասիրության առարկան:

Մեր կարծիքով, ժամանակակից քաղաքագիտության՝ որպես գիտական դիսցիպլինի (գիտակարգի) համար կարևոր է երկու հիմնախնդիր: **Առաջին**, քաղաքագիտության առարկայական բնագավառի պարզ սահմանումը և, **երկրորդ**, քաղաքագիտության տեղը և որոշակի դերը գիտությունների համակարգում: Այս երկու հիմնախնդիրների վերաբերյալ քաղաքագետները միասնական կարծիք չունեն, սակայն քաղաքագիտության սահմանների բազմազանությունը, ինչպես նաև նրա առարկայական ոլորտի մեկնաբանությունները պահանջում են որոշակի համակարգայնացում, որոնց շուրջն առաջարկում ենք ծավալել գիտական բննարկումներ:

Քաղաքական գիտության զարգացման կարևոր բնութագրիչն է դարձել էմպիրիկ հետազոտության դերի և կարգավիճակի ամրապնդումը: Իհարկե, քաղաքական գիտությունը որպես այդպիսին դեռևս իր կայացման փուլում է, ուստի որոշ հատկանիշներ, որոնք բնորոշ են արդեն ձևավորված «էմպիրիկ» գիտություններին, վերջինիս մոտ դեռևս լրիվ զարգացած չեն և նույնիսկ բացակայում են: Միգուցե, իրոք, քաղաքագիտության զարգացումը ուղեկցվում է իրական սահմանափակումներով, կամ մենք ենք բախվում ճանաչողության սահմանին, որն առայժմ անհնար է խախտել:

Համենայն դեպս, կատարված բննարկումները հիմք են տալիսեզրակացնելու, որ քաղաքական գիտությունը ոչ միայն կարող է լինել «իդեոգրաֆիկ», այլև «էմպիրիկ», ուստի ներկայումս բավականին որոշակիորեն դրսևորվում է այդ որակներով:

Summary

POLITICAL SCIENCE AS A BRANCH OF SCIENCE Some considerations upon the science examining the politics

Ludvig G. Vardanyan

To distinguish political science as science or discipline it is important to lay down the goals and questions that make it different from the other social and humanity disciplines, as well as substantiate its real place in the scientific system.

The political science is complicated by its special subject of research. In general, social-political science can study the regularities and tendencies of such and such sphere of life as well as its separate institutions, main issues, facts, phenomena. Traditionally, the value of the political science is determined by the ability of exploring the cause-effect relationships in the society. That means that these abilities or opinions may become a base and give the opportunity to perceive the repeatability of the events, defining as a

result some “objective” and always reproducing forms between politics and life’s other aspects’ inter-dependence, some modes of human behavior, state organization methods and so on.

Political science is examined in this article to wide extent, as a general theory of politics, at the same time it is considered to be a totality of different disciplines, which coheres by the general object of the research. Each scientific sphere or discipline has its own conceptual framework and research tools. Nevertheless two types of knowledge can be differed: empirical and theoretical and each of them has its particular methods of research. It is justified in this article that political science is particular by its nature and may show up also as “empirical” science, which is certainly to be discussed and substantiated in the sequel.